

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-9-4-Ա

ք. Երևան

14.10.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հոկտեմբերի 14-ի նիստում քննարկեց 2022 թվականի հունիսի 17-ին արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված՝ «Բամելքս» ՍՊԸ ընկերության (Երևան 0061, Գայի 39, բն. 39, AM) «SUN OF LADY» (№20210402) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցման հիման վրա պահպանվող՝ «Sunny Lady» («Ռոբերտո պլյուս» ՍՊԸ, Երևան, Կոմիտասի 43 (AM), N 18637, 31.07.2012թ.) ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ և 124.3-րդ կետերի համաձայն ապրանքային նշաններն ունեն ձայնային (հնչյունային) նմանություն, որը որոշվել է համեմատվող նշաններում ձայնավորների և բաղաձայնների կազմի մոտիկությամբ, մոտ և համընկնող հնչյունների առկայությամբ, նշանների համընկնող մասերի բնույթով և մեկը մյուսի մեջ մտնելով, ինչպես նաև համեմատվող ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվել նշանների մեջ դրված նման հասկացությունների, գաղափարների հակադրության և համընկնող իմաստի առկայությունը: Տվյալ դեպքում հայտարկված «SUN OF LADY» նիշը զուգորդվում է ավելի վաղ գրանցված «Sunny Lady» ապրանքային նշանին ձայնային (հնչյունային) նմանությամբ, ինչպես նաև նույն արտահայտված մտքով, այն է՝ «SUN(NY) (արև, արևոտ)» և «LADY(տիկին)» բառերը, մեկը

մյուսի մեջ մտնելով, տալիս են նույն իմաստի ընկալման զգացողություն և կարող են միջին սպառողի կողմից ընկալվել նույն կերպ:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին, քանի որ հակադրված նշանի իրավատիրոջ կողմից ներկայացված է նամակ համաձայնագիր մերժված ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանի կողմից ներկայացված «Բամելեքս» ՍՊԸ ընկերության «SUN OF LADY» (No20210402) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ